

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
GAGIK KHACHATRYAN
ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ
ASHOT ASLANYAN

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարդկության պատմական զարգացման վաղ ժամանակաշրջաններից սկսված հայրենասիրությունը եղել և մնում է ցանկացած հասարակության բարոյագիտական արժեքականարգի բաղկացուցիչ մասը: Դեռևս անտիկ աշխարհի փիլիսոփաները հասարակության բոլոր անդամների գլխավոր պարտականությունը համարում էին հայրենասիրությունը:

ԽՍՀՄ փլուզումով և Հայաստանում անկախ պետականության վերադարձումով սկսվեց հասարակության մեջ գաղափարական-բարոյական զգացմունքային վերելք՝ կապված ազգային-ազատագրական շարժման, պետական քաղաքականության կազմակերպման հետ: Այս գործընթացներում հասարակության շարժիչ ուժը հայրենասիրական առաջավոր գաղափարներն էին, որոնցով հայաստանյան ինտելեկտուալ մտքի ջատագովներին հաջողվեց մոբիլիզացնել այն հավաքական ուժը, որն անհրաժեշտ էր Արցախի ազատագրման, Հայաստանի սահմանների պաշտպանության, ժողովրդավարության և պետական կառույցների հիմնադրման համար:

Հայաստանյան իրականությունն անկախ պետականության զարգացման արդի փուլում կրում է փոխակերպվող հասարակությանը բնորոշ համաշխարհային գործընթացներով պայմանավորված համընդհանուր փոփոխությունների կնիքը: Իրական սպառնալիքներ պարունակող ռազմաքաղաքական իրադրություն, տնտեսական ճգնաժամ, պատմամշակութային և հոգևոր արժեքների վերագնահատում և սրանց հաղթահարմանն ուղղված պետական քաղաքականության մշակում և իրագործում, ինչպես նաև հասարակության բոլոր սոցիալական խմբերի համապատասխան արձագանք և գործողություններ:

Սույն աշխատանքի նպատակն է անդրադարձ կատարել հայաստանյան հասարակության հայրենասիրական դաստիարակությանը, էթիտասարդության, որպես հասարակության առավել ակտիվ մասի, հայրենա-

սիրական որակների ձևավորման և պահպանման հիմնախնդրին՝ ռազմահայրենասիրական դաստիարակության շեշտադրումով: Բերվում են հայրենիքի և հայրենասիրության վերաբերյալ փիլիսոփայական մոտեցումներ, ինչպես նաև այն գաղափարական թեզերը, որոնք այսօր կազմում են մեր պետության և հասարակության անխախտելի մաս կազմող ազգային բանակի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության բովանդակության անբաժանելի մասը: Այս առումով բերվում են նաև մեր հեղինակներին, տեսակետները և եզրահանգումները:

Հայրենասիրություն կամ պատրիոտիզմ՝ հին հունարենից սկիզբ առնող եզր է (patris-հայրենիք): Փիլիսոփայական մտքի աղբյուրները տալիս են տարողունակ սահմանումներ հայրենասիրությանը. «Հայրենասիրությունը ցանկացած սոցիալական կազմակերպության (օրինակ՝ մարդկային հանրության) հզոր ամրաններից է, որի քայքայումով (ինքնաբերաբար, թե արհեստականորեն) սկսվում է կազմակերպության վախճանը: ...Ասվածին ավելացվում է՝ ծառայությունը հայրենիքին, պաշտպանությունը թշնամիներից»: Ռուս ժողովրդավար Ն.Չերնիշևսկին գրել է. «Գործածելով «պատրիոտիզմ» սուրբ բառը՝ հաճախ անհրաժեշտություն է դառնում որոշել, թե ինչ ենք ուզում դրանով հասկանալ» [1]:

Ժամանակակից փիլիսոփայության տեսանկյունից. «Հայրենասիրությունը գաղափարախոսություն է և հոգեբանություն, քաղաքականություն է և գործունեություն, նվիրվածություն է հայրենիքին»: Հոգեբանությունը արտահայտում է սիրո զգացմունքայնությունը՝ հայրենիքի հանդեպ, իսկ գաղափարախոսությունը՝ ռացիոնալ, այդ զգացմունքայնության տեսականորեն հիմնավորված մակարդակը [2]:

Հայրենասիրությունը քաղաքական և բարոյագիտական սկզբունք է, սոցիալական զգացում, որի բովանդակությունը՝ սերը, նվիրվածությունն է հայրենիքի հանդեպ, հպարտությունը նրա անցյալի, ներկայի և ապագայի նկատմամբ, նրա շահերի պաշտպանությունը: Հայրենասիրությունը ժողովրդի՝ հայրենասիրություն կրող օբյեկտի, ազգային շահերի արտահայտությունն է: Սակայն հասարակության տարբեր սոցիալական խմբեր հայրենասիրության զգացումը կարող են ընկալել իրենց ներխմբային շահերի տեսանկյունից [3]:

Հայրենիքը տվյալ երկրի հասարակության բնական միջավայրի և սոցիալական տարրերի, այդ թվում՝ լեզվախմբի, միավորումն է (համախմբումն է): Կարելի է տարբերակել «հայրենիք» հասկացության երկու բովանդակություն՝ փոքր և մեծ. «փոքր հայրենիքը» կոնկրետ աշխարհագրական միջավայրն է, որտեղ մարդը ծնվել և մեծացել է, ձևավորվել են հայացքներ իր ծննդավայրն ընդգրկող միջավայրի և շրջապատող արտա-

քին միջավայրի վերաբերյալ, իսկ «մեծ հայրենիքը»՝ պետությունն է, ուր ապրում և գործում է մարդը:

Հայրենիքը հայրենասիրության օբյեկտ է, որին ուղղված է հայրենասիրության սուբյեկտների՝ տվյալ երկրի (պետության) հասարակության (քաղաքական հանրության) գործունեությունը:

Խոսելով հայրենասիրության մասին, ռուս պատմաբան Ն.Մ. Կարամզինը առաջ է քաշում երեք բաղադրիչներից բաղկացած մոդել.

1. ֆիզիկական սեր հայրենիքի նկատմամբ («...Այստեղ եմ ծնվել, այստեղ մեծացել և այս ջուրը խմել ստոնորակ» - ծ.հ).

2. քաղաքացիական սեր (երբ կապված ես ամուր սոցիալական կապերով՝ ազատությունների, պարտականությունների և իրավունքների համադրությամբ).

3. քաղաքական սեր (երբ պահպանում ես գործունեությանդ մեջ հայրենիքի քաղաքական իդեալը) [1]:

Ընդհանրացնելով վերը նշված երեք բաղադրիչները՝ եզրակացնում ենք, հայրենիքը պետական-հայրենասիրական գործունեության օբյեկտ է, որի կառուցվածքը մեր իրականության համար կարելի է ներկայացնել հետևյալ սուբյեկտիվ տարրերով.

ա) հայրենասիրական գիտակցություն (հայրենասիրության դրսևորում հայրենիքի սուբյեկտի կողմից),

բ) հայրենասիրական վերաբերմունք (հայրենասիրական գիտակցական ուղղվածություն՝ ներգործության առումով),

գ) հայրենասիրական գործունեություն (հայրենասիրական նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների կամ արարքների համախումբ, որով դրսևորվում է հայրենասիրական գիտակցությունը):

Հայրենասիրությունը եղել և մնում է հայ ժողովրդի ինքնության բնորոշ գիծ, հատկանիշ, պետականության հիմնադրման և զարգացման ոգեղեն հիմք: Հայրենասիրության գաղափարները Հայաստանում ծնունդ են առել հայ ժողովրդի ծագման, ձևավորման ակունքներում, ամրացվել քրիստոնեության ընդունման հետ: Հայ ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում մարտնչել է օտար նվաճողների դեմ, վերականգնել է իր կորցրած պետականությունը հայրենասիրության գաղափարի հենքի վրա: Փաստորեն, պատմական նման իրադրություններում հայրենասիրությունը ձեռք է բերել պետական գաղափարախոսության մակարդակ:

Հայրենասիրությունն աշխարհի տարբեր երկրներում¹ և դրանց բանակներում դասվում է ըստ ուղղությունների՝ ռազմական, բարոյական, հոգեբանական, մարդասիրական, բնապահպանական, մշակութային և այլն: Հայ ժողովրդի հասարակական գիտակցության կամ հանրային գիտակցության մեջ արմատացել է հայրենասիրության գաղափարի և զինվորական պարտքի գիտակցության միասնությունը: Հայոց բանակի (բոլոր ժամանակաշրջանների) զորահրամանատարները, սպաներն ու զինվորները հանդիսանում են հասարակական հայրենասիրության ուղղակի կրողները:

Ձինձառայության ոլորտում դաստիարակչական աշխատանքն իրենից ներկայացնում է զինվորական գործունեության կառավարման գաղափարական և կազմակերպչական միջոցառումների գիտականորեն հիմնավորված համակարգ: ՀՀ զինված ուժերի (ԶՈւ) համակարգում անձնակազմի հետ տարվող դաստիարակչական աշխատանքի հիմնական ուղղություններից մեկը ռազմահայրենասիրական դաստիարակությունն է, որի բովանդակությունը կայանում է՝

- հայ ժողովրդի հերոսական անցյալի ու ներկայի՝ ռազմարվեստի ոգով և ավանդույթներով դաստիարակության մեջ,
- պետության վարած ռազմաքաղաքական գծի, նրա զինված ուժերի կառավարման գործընթացների նկատմամբ հավատի մեջ,
- պետության և նրա զինված ուժերի ղեկավարության նկատմամբ վստահության և հարգանքի զգացման մեջ,
- զինված ուժերում ապակառուցողական տարրերի անբարենպաստ գործունեության անհանդուրժողության և խափանման մեջ:

Ներկայումս ՀՀ ԶՈւ անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակությունը կազմակերպվում է Նժդեհյան կամ «Ցեղակրոնություն» և «Տարոնականություն» գաղափարական լուսնոգնության հենքի վրա [4]:

1932թ. Մոֆիայում լույս տեսնող «Խումկ» ամսագրում, «Հոգեոր նորոգության խնդիրներ» խորագրով, Գարեգին Նժդեհը հրապարակեց «Ցեղակրոնությունն իբրե՝ հաղթանակի գոյույթ» գաղափարաբանական հոդվածը, որով սկզբնավորվեց Ցեղակրոն շարժումը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայության մի մասը կրում էր խորհրդային քաղաքական մեքենայի ներգործությունը, մյուս մասը՝ կրում սկսում էր սեփական տրա-

¹ Հրթնակ, Ռուսաստանի Դաշնությունում այս սկզբունքների իրադրոժում են պետական մակարդակով ընդունված «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների խայրենասիրական հասարակականությանը 2009-2010թթ. լուսնոգնություն» և «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների խայրենասիրական գաղափարականությանը 2011-2015թթ. լուսնոգնություն» որոշումներ, ինչպես նաև այլ օրենսդրական ակտերի ձևերով, [10]

մադրություններ, զոհի հոգեբանության, թերապևտիկության և խնդրանքների ման բարդությո:

Ազգային գործիչների, նույնիսկ եկեղեցու ջանքերը ինքն իրեն հոգեպես վերագտնելուն ձգտող հայությունը համար չէին տալիս տպավորած արդյունքը: Եվ ինչպես կասեր Հակոբ Պարոնյանը. «Առաջ ք. առաջ ք. կպահանջեմ, ետ-ետ կերթանք»:

1930-ականների վերջին հայկական սվյուդերի մի շարք գաղթօջախներում, հատկապես Եվրոպայի գաղթօջախներում, հայությունը թեևսխիմեց զարգացման հոգեբանական զարթոնքի՝ գաղափարախոսությունը սուրբ ված նոր փուլ։ Այս գաղափարախոսությունը, որի եխմաղթությունը սլաուկանում էին Գ.Նժդեհին, ալահովեց սվյուդերախոսությունը անխոսանքությունը Եվրոպայում ծավալվող «շաղանակալույս» չարիքից թերևս «Յեղոկյուուություն» գաղափարախոսության ժամանակակից ետեղությունը գտնում են, որ այն (Գ.Նժդեհը համարում էր հայկական ցեղը արիությանը) գուրկ է ալ ազգերի նկատմամբ բացասական վերաբերմունքից՝ սուրբաբան աղբի թի գաղափարից, ինչը հնարավոր չէ չառել 1919թ. ձևավորված իտալական ֆաշիզմի և 1933 թ. հաստատված գերմանական նացիզմի ժողովրդի ։

«Տեղակրոն» գաղափարախնդրանքի հիմքում ընկած են երկու հիմնարար սկզբունքներ.

ա) մեր դժբախտությունների համար մեղավոր եմ եսիմաստեղ
մենք.

բ) մեզ պետք է դառնա ուժի փնտրելու մեզ մեջ

Կադափարարանությունը, որին հաճախ կոչում են հոգևոր քաղաք է դնում աշխարհին Հայ ցեղի բերած պատկառելի տվածը հայ աշխարհային քաղաքակրթության մեջ: Եղակրոնության բովանդակությունը կապվում է հայկական երևույթի խորհրդանշանի: Քնդադրվում մեջ հայրենասպաշտություն, արքան պաշտամունք (հայկական կենսաբանական գենետիկ կոդ կրող), իգլի պաշտամունք (սպարապետական պրոֆանաթեոստիզմ), գոհասպաշտություն (գրգռության և պատվի համադրված անալիզի մեղում), նախնիասպաշտություն (իմե ու նոր սերունդների պրոֆանաթեոստիզմ), նախնիների քաջությունը նոր սերունդի պատվարների վրա: Հիմնադրված էր, ուժապաշտություն (հայ պաշտամունք, բանգ, ու խաբին, հաբլում և Հանապարհ սպանվում միայն ուժով, խաբին, ուժապաշտության (պաշտամունքի մեղում) և նաև ցեղի խորհրդանշանը, ստանդարտը, որին պիտի և նմանակվի: Պատկառնական բանգը, որ նա ցեղի քաղաքակրթության կրողն ու պատվին է):

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and the quality of the scan.

համարտից հետո, հավանաբար աշխարհում, և Եվրոպայում մասնավորապես, աշխարհակալ ուժերի վերատեղաբաշխումով և ռազմաքաղաքական ու տնտեսական շահերով պայմանավորված ազդեցության ոլորտների վերաբաժանումով: Գաբեզին նժողեհի և հայ փիլիսոփա Հայկ Ասատրյանի գործունեության արդյունքում ծնվում է նոր գաղափարախոսական հոսանք՝ «Տարոնականություն», որի ծրագրային ուղղություններն էին՝

- վերջ տալ հայության քաղաքական հոսանքների և անձնապետական խմբերի միջև մղվող ներքին պառակտիչ պայքարին,
- պատրաստել ազգի և հայրենիքի համար անշահախնդիր պայքարողներ,
- մշակել հայեցի աշխարհայեցողություն, ընդհանուր ազգային տեսություն:

Տարոնականության գաղափարական-հոգեբանական հիմքը հայ դասական-պատմական ազնվականի իդեալն է, որն ի գորու է փոխելու հայի այսօրվա և վաղվա կենսակերպը: Տարոնականությունը, բնականաբար, կապված է Մեծ Հայքի Տարոն գավառի պատմա-աշխարհագրական առանձնահատկությունների հետ.

1. Տարոնը եղել է հեթանոսական, ապա քրիստոնեական Հայաստանի գլխավոր հոգևոր կենտրոնը.
2. Տարոնում կերտվել է «Սասնա Շուր» դյուցազնավեպը.
3. Տարոնի ծնունդ են հայ գիտական և հոգևոր արժեքների ջատագովներ Մովսես Խորենացին և Մեսրոպ Մաշտոցը.
4. Տարոնը եղել է հայ դասական ռազմական ուժի՝ բանակաշինության կենտրոնը: Տարոնի Մամիկոնյան իշխանական տոհմը ղեկավարել է բանակը, վարել սպարապետական պաշտոն Արշակունիների արքունիքում.
5. Տարոնը եղել է Արևմտահայաստանի հայդուկային շարժման կենտրոն:

Ըստ Տարոնականության հետևորդների՝ վերը նշվածը գուցադիպություններ չեն, այլ տրամաբանական ոգու արտահայտություն, որն էլ հայության հարատևման հավիտենական գենքն է [4,6,7]:

Պատերազմների փորձը ցույց է տվել, որ գինավարժ բանակ ունենալը դեռևս հաղթանակի գրավական չէ: Անձնակազմի մասնագիտական պատրաստությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է: Ուրիշ է, երբ մասնագիտական պատրաստությունը գուցակցվում է հայրենասիրական դաստիարակության, բարձր մարտական-բարոյական և կամային հատկանիշների հետ, իսկ հասարակությունը տոգորված է հայրենասիրությամբ:

Տարոնականության և բանակաշինության ժամանակակից տեսաբանները, մասնավորապես պ-ն Բ.Վարդանյանը², բանակի կառավարումը տեսնում են ռազմավարական գործողությունների հեռանկարային պլանավորման, միանձնյա ղեկավարման, անհատական օրինակով և կոլեկտիվ ձևով, հայ ժողովրդի պատմական անցյալի փառավոր էջերով, բարձր մարտական-բարոյական հատկանիշների ձևավորմամբ և պահպանմամբ անձնակազմի դաստիարակության, օպերատիվ տեղեկատվությամբ ապահովման մեջ: Այս առումով տեղին է մեջ բերել 5-րդ դարի պատմիչ Եղիշեի հուշերը, Գ.Նժդեհի խոսքերը Վարդան Մամիկոնյանի մասին.

«...Եվ պատերազմական կարգի համաձայն՝ քաջ տղամարդկանց հիշատակության արժանի գործերը շարունակ կրկնում էր նրանց (զինվորականների – ծ.հ.) առաջ, դարձյալ ու նրանցից սրան-նրան ծածուկ քաջակերում էր (վարում էր անհատական դաստիարակչական աշխատանք – ծ.հ.) ու սիրտ տալիս և բոլոր պակասությունները լրացնում (ընթացիկ և անձեռնմխելի պահուստային պաշարներ – ծ.հ.):» - Եղիշե, 25 մայիսի 451թ., Ավարայր:

Վարդան Մամիկոնյանի խոսքն ուղղված հայոց զորքին. «Վախը թերահավատության նշան է... Մահն ընդունեք ուրախ սրտով»: «Գերազանցիր նախորդներիդ: Կովիր այնպես, որ քո ընթացքով հեշտացնես քեզից հետո մինևույն նպատակի համար կոփողների գործը»:

«Վարդանն ու Վարդանանք իրենց հերթին նախապատրաստեցին, հեշտացրեցին Վահան Մամիկոնյանի պայքարը, որը պիտի հարկադրեր Տիգրանին՝ հրաժարվել Հայաստանն իրանականացնելու մտքից»³: [8]

«Տարոնականությունը», որպես հայ զաղափարախոսական ուղղություն ներառում է ռազմական հոգեբանության հիմնախնդիրներ, որոնք տարածվում են զինծառայության ոլորտի հիմնական օբյեկտի՝ հայ զինվորի գիտակցության հուզական տրամաբանության վրա.

1. ով է ղեկավարում ինձ: Խորհելով այդ մասին՝ զինվորը շատ անգամ հոգեբանորեն հաղթանակում է կամ պարտվում դեռ մարտի մեջ չմտած.

2. ով է վարելու մարտը: Ժամանակակից մի Մամիկոնյան, թե մի սովորական սպա: Այդ միտքը հաճախ խոտվում է զինվորի հոգեկան ներաշխարհը: Միայն հրամանով չէ, որ զինվորը նետվում է մարտի և

² գրական կեղծանունը՝ Վ.Գրիշենց, ՀՀ վարչապետի խորհրդական հասարակության հայրենասիրական դաստիարակության հարցերով, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական ԶՈւ անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերով

³ Գ. Նժդեհ, «Հատընտիր», Երևան, 2006թ., էջ 349, 404:

միայն հրաման կատարելով չէ, որ գոհվում է: Սա կատարվում է, երբ գործառնալը խթանում է այն (ի նկատի է առնվում ընդհանուրի շահը, հաղթանակի նպատակը - ծ.հ.): Կրքերի հրահեղեղը մղում է գինվորին հառաջ:

Ձինվորը տրամադրված է (հսկված է) տեսնելու հրամանատարի մեջ ոչ թե աստղակիր ուսադիրներով անձի, այլ ավելիին: Ի տարբերություն հասարակության մեջ գործող այլ պաշտոնների, սպայի պաշտոնական պարտականությունների մեջ մտնում են մարտնչելը, մարտնչել ուսուցանելը, մահաբեր գործողություններ ղեկավարելը: Հայոց բանակի սպան պետք է լինի գաղափարապես զրազետ, ազնիվ ու առաքինի: Հայ զինվորը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա հրամանատարներին հաջողվում է մարտի ընթացքում հավաքական ոգի ստեղծել:

Վ.Գրիչենցն ընդունելով Նժդեհյան գաղափարները, դրանց ավելացնում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարոյագիտական գաղափարախոսությունը, դնելով վերջինը առաջին տեղում: Նրա կարծիքով, թե բանակի անձնակազմի ռազմահայրենասիրական դաստիարակության, թե հայ հասարակության հայրենասիրական դաստիարակության գաղափարախոսական հիմքը Տարոնականության և Քրիստոնեական հավատի գաղափարական համադրությունն է և բացի այս, բանակի օրինակով հնարավոր է հասարակության գաղափարականացումը [9]:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, գալիս ենք եզրահանգման.

Մեծ ու Փոքր Հայրենիքների գաղափարը, հաշվի առնելով աշխարասփյուռ հայության և նրա աշխարհիկ ու տարբեր դավանաբանական հայացքների իրողությունը, ընդունելի ռացիոնալ մոդել է, որին ուղղված է հայ հանրության հայրենասիրությունը, կամ հայրենասիրական գործունեությունը:

Հայրենասիրությունն ինքնին դաստիարակության միջոց է, իսկ հայրենասիրական դաստիարակությունը հայաստանյան փոխակերպվող հասարակության զարգացման արդի փուլի հիմնախնդիրներից մեկն է: Թերևս հայրենասիրության՝ ձևավորումն է, որը հասարակության գործունեության ոլորտների կառավարման մարմիններից պահանջում է իրադրության ճիշտ գնահատում, գործողությունների սուսուհանդերթության որոշում, դրանց իրագործման արդյունավետ մեթոդների մշակում: Հասարակական գործունեության հաջողությունն իր հերթին կախված է հասարակության և նրա անդամների կողմից ժամանակի խնդիրների ճիշտ ընկալումից և հակասությունների պատճառա-հետևանքային կապերի գիտակցված և հստակ ըմբռնումից, ինչպես նաև խմբային և անհատական գործունեությամբ սուսաջացող խնդիրների կարգավորմանը ջանքերի ուղղորդելուց: Զարգացնելով

այս գաղափարը կարող ենք համոզված կերպով ասել. իսկական հայրենասիրությունը իր պետության, նրա ղեկավարության վարած քաղաքականության, առաջնորդող գաղափարների և ձեռնարկած միջոցառումների նկատմամբ տածած հավատն է, ժողովրդի պատմության, սովորությունների և ավանդույթների գիտենալն ու հարգելն է, մշակութային արժեքների նկատմամբ հոգատար, սրտացավ վերաբերմունքն է: Փաստորեն, հայրենասիրությունը կարելի է ընկալել որպես հասարակության բարոյահոգեբանական վիճակի հատկանիշ:

Հասարակության գաղափարականացումը կարող է ունենալ դրական ազդեցություն ազգային բանակի ծառայողական գործունեության, մասնավորապես անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի վրա (ի նկատի ունենք նաև այն հանգամանքը, որ անձնակազմի ճշշող մեծամասնությունը 18-20 տարեկան երիտասարդներ են, որոնց աշխարհայացքի ձևավորման վրա անպայման իր ազդեցությունն է թողնելու զինծառայության առանձնահատկությունները), ժողովրդավարական ինստիտուտների և բարեփոխման ծրագրերի ներդրումային գործընթացների վրա, և ոչ հակառակը, քանի որ բանակի բուն նպատակային գործունեության ձևերը կրում են աներևակայելի ուժի կիրառություն, ինչպես նաև հասարակության գործունեության հարկադրված ոեժիմային սահմանափակումներ: Իսկ հայ հանրության, հատկապես երիտասարդության հայրենասիրական որակների ձևավորման և պահպանման արդի խնդիրները, գաղափարական նպատակադրումները առայժմ ամփոփված են ՀՀ պետաիրավական փաստաթղթերում (ՀՀ Սահմանադրություն, օրենսդրական և ենթօրենսդրական ակտեր) և ռազմավարական ծրագրերում (ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, ՀՀ ռազմական դոկտրին, ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ): Ելնելով այս հայեցակարգային փաստաթղթերի բովանդակությունից, հաշվի առնելով ՀՀ անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները, կարելի է եզրակացնել՝ ռազմահայրենասիրական դաստիարակությունը, որպես հասարակության հայրենասիրական դաստիարակության բաղադրիչ, վերաբերում է ոչ միայն պետության և հասարակության մաս կազմող զինծառայության ոլորտին:

Մեր հասարակության հայրենասիրական դաստիարակության պրոցեսի կատարելագործման գործընթացը կանխատեսում է պետության ենթակառուցվածքների ջանքերի ներդրումով պայմանավորված համալիր միջոցառումների համակարգ: Պետք է հասնել նրան, որ յուրաքանչյուր քաղաքացի, զինծառայող հստակ գիտակցի հայրենիքի անվտանգության ապահովման գործող մեխանիզմը և իր գործունեությամբ, ծառայությամբ նպաստի կամ իրականացնի այն:

Քանի դեռ հասարակության մեջ չի մշակվել և ժողովրդավարական ուղով չի ընդունվել պետական-ազգային գաղափարախոսություն, նրա հայրենասիրական դաստիարակության բովանդակությունը կարող է ներկայացվել միայն առանձին արժեքների և գաղափարների հիմնադրույթների տեսքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. В.Новожилин. Система государственно-патриотического воспитания. Вестник границы России, №2, март-апрель 2007г., стр. 61-65.
2. В.И.Забаровский, А.М.Касьянов и др. Морально-психологическое обеспечение служебно-боевой деятельности ФПС РФ. М., Граница, 1999г., стр.84-91.
3. Ա.Վ.Արդ, Վ.Վ.Ալտման և ուրիշներ. Փիլիսոփայական բառարան: Ե., «Հայաստան», 1975թ., էջ 231:
4. Գաղափարադաստիարակչական պատրաստության և հասարակական-պետական պատրաստության ձեռնարկ: ՀՀ ՊՆ. Երևան, 2010թ., էջ 56,183-184,192-197:
5. Լ.Նազարյան. 1930-ական թվականների հայկական սփյուռքի գաղափարական փոխակերպման առանձնահատկությունները: Միջազգային գիտաժողով. «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ)»: Ասփոփումներ. Երևան, ՀՊՄՀ., 16-17.04.2012թ., էջ 28-29:
6. Ա.Սարգսյան, Վ.Աթոյան և ուրիշներ. Գաբեգին Նոյեմի ուսմունքը և դրա արդիականությունը: Երևան, ՀՀԿ հրատ., 2009թ., էջ 95-141:
7. Վ.Գրիչենց, Հայ ազգային գաղափարախոսություն. հայության կենսունակ հարատևման գրավական: Երևան, ԳԱԱ, 2009թ., էջ 167-176:
8. Վ. Գրիչենց, Վարդան Մամիկոնյանի խոսքը հայոց բանակին:Եր., Հայք,2007թ.,էջ 11,14-15:
9. Վ.Գրիչենց, Հայ ազգային գաղափարախոսություն. հայոց բանակի հզորության գրավական: Եր., «Հենակետ» ՓԲԸ տպարան, 2011թ., էջ 6-7,14,19-20,33,36-51,82,92-96:
10. А.А.Лазарев, Проблемы военно-патриотического воспитания допризывной молодежи. Военная мысль, №5, 2012г., стр.51-55.

The conceptual basis of society patriotic education in Armenia

At the present stage of development of an independent Armenian state reality has all the signs of global change inherent in a transforming society: containing the real threats of the military-political situation, the economic crisis, the reassessment of the spiritual, historical and cultural values, development and implementation of policies aimed at overcoming the existing risks and Management response of all groups of society.

The process of patriotic education of the Armenian community is the introduction of public infrastructures in advance due to the complex system of educational activities. Need to reach to every citizen, a soldier in their efforts to ensure the safety of the Motherland was fully aware of and accepts this mechanism.

Due to the fact that, until now, state and national ideology developed and formally adopted in compliance with democratic procedures, content patriotic society can only be presented in the form of individual ideas and values.